

Այդ հին սովորութեան զօրութեամբ՝ վարդան վրդ. կը յորդորէ, որ մանկանց մկրտութենէն յառաջ անոնց ընտանիքը «շաբաթ մի պահօք» անցնեն՝ անկարող երախային փոխան (Քրդ.), եւ զոր կը կրկնէ Յովհ. Եզնկացին եւս (Խրտ. Գ):

11. - Ապաշխարողք: — Ա. Անոնք որ ծանր մեղաւորութենէ կը դառնային, ժամանակ մը պարտաւոր էին ապաշխարութեամբ քաւել իրենց անցեալը, եւ Աստուծոյ ցասումն ամօքել: Ասոր մասն էր պինդ պահեցողութիւնն ալ, որ կը ծագի հին կտակարանէն (Թագ. Ա, Է, 6. Գ, ԽԱ, 27), եւ կ'ընդունուի քրիստոնէութենէն (Ֆլետր. 392): Այսպէս եւ նորադարձ Հայերն ըստ Ագաթանգեղոսի քոչրձ զգեցած, եւ մոխրի վրայ նստած, «պահեալ յինէին պահս աւուրս վաթսուն եւ վեց» (545), որ տարբեր էր վերոյիշեալ երախայական երեսնօրեայէն: Նոր օրէնքը, կ'ըսէ Յաճախապատումը, պղծագործը կ'արտաքսէ եկեղեցիէն, մինչեւ որ գիշեր ու ցերեկ «ի խորց եւ ի մոխիր պահօք ապաշխարեսցէ» (69): Կերակրոց զրկումը, կը յաւելու նոյն գրոց հեղինակը, զմարդիկ ապաշխարութեան եւ ուղղութեան կը բերէ. անոր համար «ըստ խոստովանութեան կարգին հաստատեալ ի պահս՝ լուծանին մեղքն»